## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան Մելիք Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՖՆ-ՇՀԱՊՁԲ-11/21-15/12 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի արդյունքում 2015թ-ի ապրիլի 29-ին կնքված պայմանագրում 2015թ-ի հունիսի 16-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրի կողմի առաջարկությամբ, կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են պայմանագրի գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված 1-ին խմբաքանակի ապրանքների մատակարարման ժամկետ են սահմանում 2015թ. հուլիսի 1-ը:

Փոփոխության հիմնավորում: Փոփոխությունը կատարվում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ Պայմանագրի 9.3 կետի համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ. Ջանջուղազյանին:

Հեռախոս՝ 094 49 13 38:

Էլ.փոստ՝ info@interlimens.com:

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
2015թ. ապրիլի 29-ին կնքված N ՖՆ-ՇՀԱՊՁԲ-11/21-15/12 պայմանագրի

ք. Երևան «16» հունիսի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Մեգնա» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ա. Շախմուրադյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 29/04/2015թ. կնքված N ՖՆ-ՇՀԱՊՁԲ-11/21-15/12 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.3 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի գնման ժամանակացույցը հաստատել նոր խմբագրությամբ համաձայն N 1 հավելվածի.

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | ք. Երևան, Տիգրանյան 1 փակ 1 |
| ք.Երևան, Մ. Ադամյան 1 | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՖՆաշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 2050022125661001 |
| ՀՎՀՀ 02629081 | ՀՎՀՀ 00083019 |
| Հ/Հ 900011000925 | էլ. հասցեն՝ megnasales@autogroup.am |
| | Հեռ. (010) 24-75-99, (099) 10-91-03 |
| _______________ (ստորագրություն) | _______________ (ստորագրություն) |

Հավելված 1
“29” ապրիլի 2015թ. կնքված
N ՖՆ-ՇՀԱՊՁԲ-11/21-15/12 պայմանագրի հիման վրա
“...16...” հունիսի 2015թ. կնքված համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման

| Հ/Հ | Ապրանքի* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չ/մ | քանակը | մատակարարման ժամկետը | Երաշխիքային ժամկետը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ |
| 1 | Մարդատար ավտոմեքենա Renault Logan | Չշահագործված, թողարկման տարեթիվը 2015թ, առավելագույն վազքը 100կմ: Թափքի տեսակը՝ սեդան, 4 դուռ, առջևի քարշակ, երկարությունը՝ 4290մմ, լայնությունը՝ 1723մմ, բարձրությունը՝ 1511մմ, շարժիչը բենզինային, շարժիչի աշխատանքային ծավալը 1.4լիտր, 8 փական, շարժիչի հզորությունը՝ 75 Ձ/ՈՒ, փոխանցման տուփը մեխանիկական՝ 5 աստիճան,, անվահեծերը՝ R-14, վառելիքի ծախսը՝ 100կմ համար՝ խառը ռեժիմում՝ 6.9 լիտր, բեռնախցիկի ծավալը 510 լ, վառելիքի բաքի ծավալը 50լիտր, անվտանգության 1 բարձիկ, շարժիչի տակի մետաղական պաշտպանիչ, իմմոբիլայզեր, լիաչափ պահեստային անվադող: Հետևի ապակին տաքացվող, Սրահը կտորից, Եռակետ անվտանգության ամրագոտիներ, Քաշը 975 կգ: | հատ | 90 | Ավտոմեքենաների մատակարարումը իրականցվում է՝ ***1-ին խմբաքանակ - 45 հատը*** պայմանագրին ուժի մեջ մտնելուց հետո՝ **մինչև 2015թ. հուլիսի 1-ը,** ***2-րդ խմբաքանակը’*** - 45 հատ պայմանագրին ուժի մեջ մտնելուց հետո՝ **60-րդ աշխատանքային օրը:** | ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարի կամ 100000 կմ, որը շուտ վրա կհասնի՝ ըստ երաշխիքային սպասարկման գրքույկի | 5280000 |
| Մատակարարման պայմանները | | Ապրանքների մատակարարումը իրականացնում է մատակարարը իր պահեստից Պատվիրատուի պահանջի համաձայն, ըստ մատակարարման ժամկետի: | | | | | |

* Ապրանքները պետք է լինեն չօգտագործված՝ առավելագույն վազքը 100կմ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | ք. Երևան, Տիգրանյան 1 փակ 1 |
| ք.Երևան, Մ. Ադամյան 1 | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ Ֆնաշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 2050022125661001 |
| ՀՎՀՀ 02629081 | ՀՎՀՀ 00083019 |
| Հ/Հ 900011000925 | էլ. հասցեն՝ megnasales@autogroup.am |
| | Հեռ. (010) 24-75-99, (099) 10-91-03 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |